ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

Բնագիտական առարկաների առարկայական մասնախմբի նիստի

Նիստը կայացել է 2025 թվականի նոյեմբերի 27-ին:

Նիստին մասնակցել են բնագիտական առարկաների առարկայական մասնախմբի բոլոր անդամները և տնօրենի տեղակալ Լ. Մանվելյանը:

«**Օրակարգում՝**

1. Նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ Ա. Սահակյան):
2. Նախորդ մ/մ նիստի ժամանակ կայացված որոշումների մասին մ/մ ղեկավարի զեկուցում:
3. Մ/մ ղեկավարի կողմից անցկացված դասալսումների արդյունքների ամփոփում և քննարկում:

Լսեցին՝

1. Բնագիտական առարկաներ մեթոդական մասնախմբի ղեկավար Ա.Սահակյանը ներկայացրեց նիստի օրակարգը բաղկացած 4 հարցից:

Լսեցին՝

2. Մ/մ ղեկավար Ա.Սահակյանը զեկուցեց նախորդ նիստի որոշումների կատարման մասին՝ նշելով, որ մասնախմբի անդամները պատշաճ կերպով մասնակցել են կազմակերպված «Առողջ և ապահով կրթական միջավայր» և «Այլընտրանքային հաղորդակցման տեխնոլոգիաներ» թեմաներով վերապատրաստումներին և իրականացրել են պլանավորված միջոցառումները:

Լսեցին՝

3. Մ/մ ղեկավար Ա.Սահակյանը ներկայացրեց իր կողմից՝ ստորև ներկայացված ժամանակացույցով իրականացված դասալսումների արդյունքները.

N	Ուսուցչի անուն, ազգանուն	ամսաթիվ	առարկա	դասարան	դասաժամ
1	Թորոյան Ալինա	13.10.25թ.	Ես շրջակա աշխարհը	6-րդ Ա	5-րդ
2	Անդրեասյան Անահիտ	14.10.25թ.	Բնագիտություն	5-րդ Գ	5-րդ
3	Գիժլարյան Կարեն	15.10.25թ.	Մաթեմատիկա	7-րդ Բ	4-րդ
4	Խուբլարյան Ամալյա	16.10.25թ.	Տեխնոլոգիա	8-րդ	5-րդ
5	Գորգինյան Սուսան	17.10.25թ.	Բնագիտություն	6-րդ Ա	1-ին
6	Պողոսյան Մարինե	27.10.25թ.	Տեխնոլոգիա	7-րդ Գ	5-րդ
7	Խաչատրյան Անուշ	28.10.25թ.	Մաթեմատիկա	5-րդ Ա	5-րդ

Անհատապես քննարկվեց ուսուցիչների հետ, ներկայացրեց դրական կողմերը, քննարկվեց նաև առկա դժվարությունները, կատարվեց որոշակի դիտարկումներ, դասն ավելի արդյունավետ դարձնելու համար: Գրեթե բոլոր դասարաններում պահպանված էր դասի փուլային կառուցվացքը և այն կազմակերպված էր յուրաքանչյուր սովորողի կարողություններին համապատասխան: Հատկապես փոփոխություն նկատվեց 5-րդ Ա

դասարանի դասի կազմակերպման և երեխաների ներգրավվածության մեջ, ինտերակտիվ էր նաև տեխնոլոգիայի դասերը:

Արտահայտվեցին՝

Դպրոցի տնօրենի տեղակալ՝ Լ. Մանվելյանը նշեց, որ անհրաժեշտ է կատարել տարբերակված ուսուցմանն ուղղված աշխատանքներ՝ հնարավորինս բոլոր աշակերտների ներգրավվածությունը ապահովելու համար:

Որոշում է

1. Հաստատել մասնախմբի նոյեմբերի 27-ի նիստի օրակարգ:
2. Ընդունել ի գիտություն նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ մասնախմբի ղեկավարի զեկուցումը՝ արձանագրելով, որ իրականացված աշխատանքների արդյունքները եղել են գոհացնող:
3. Ուշադրություն դարձնել աշակերտների առավել ներգրավվածությանը, նոր մոտեցումներ ցուցաբերել, օգտագործել նոր մեթոդներ: Մ/մ բոլոր անդամները ընդունեցին դիտարկումներն ու առաջարկությունները ի գիտություն:

Առարկայական մասնախմբի ղեկավար՝ Ա. Սահակյան

Քարտուղար՝ Ա. Խուբլարյան

30.11.2025